ՄԵՍՐՈՊ ՏԵՐ-ՄՈՎՍԻՍՅԱՆԻ ՆԱՄԱԿՆԵՐԸ ԿԱՐԱՊԵՏ ԵՂՅԱՆԻՆ

Մեսրոպ (Փարսադան) Վարդանի Տեր-Մովսիսյանը (1865 թ., Զանգեզուրի գավառի Շիկահող գյուղ—3 հունիսի 1939 թ., Երևան) XIX դ. վերջի և XX դ. սկզբի Էջմիածնի կրթված հայագետ-հոգևորականներից մեկն էր։ 1891 թ. ուսին մեղալով ավարտելով Դորպատի համալսարանի դասական բանասիրության բաժինը և մեկնելով Վիեննա ու Փարիզ, մոտ մեկուկես տարի ամենասերտ շփման մեջ էր եվրոպացի արևելագետների և Վիեննայի Մխիթարյանների (առանձնապես Հակովբոս Տաշյանի ու Գրիգորիս Գալեմքյարյանի) հետ։ Վերջիններիս օրինակով ոգեշնչված, 1892 թ. նա սկսում է կազմել աշխարհի հայերեն ձեռագրերի ցուցակը («Ընդհանուր ցուցակ հայերէն ձեռագրաց»)։*

Կ. Եզյանին ուղղված Մեսրոպ Տեր-Մովսիսյանի (Մագիստրոս) սույն նամակները կարևոր տեղեկություններ են պարունակում Սանասարյան վարժարանի Պետերբուրգում (Կ. Եզյանի մոտ) եղած ձեռագրերի և նրանց ցուցակի (որ 1901 թ. գարնանը կազմել է Մ. Տեր-Մովսիսյանը, իսկ նույն տարվա ամռանը ձեռագրերը դարձել են հրդեհի զոհ), «Ընդհանուր ցուցակ»-ի ստեղծման պատմության, Էջմիածնի մատենադարանի նոր շենքի կառուցման հանգամանքների, Պետերբուրգի եկեղեցական խորհուրդ—Էջմիածին հարաբերությունների, Էջմիածնի կաթողիկոսարանի և միաբանության ներքին կյանքի և այլ հարցերի մասին։

*Նամակների հետ պահպանվող Կ. Եղյանի մի պատասխան նամակի սևագրությունը ևս կցում ենք սույն հրապարակմանը։ Բնագրերը գտնվում են ՍՍՀՄ ԳԱ արևելագիտության ինստիտուտի Լենինգրադի բաժանմունքի արխիվային բաժնում (Արևելագետների դիվան, Թղթոն Կարապետ Եղյանի, հավաքածու 58, ցուցակ 2, վավերագիր 1290, 24 թերթ)**։ Հրապարակումից դուրս ենք թողել այս շարքի միայն մեկ նամակ (16 նոյեմբերի, 1902 թ.)։ Հրապարակման մեջ նշանակել ենք բնագրի էջերը, փոխել ուղղագրությունը և կատարել կետադրական որոշ շտկումներ։*

ՅՈՒՐԻ ՎԱՐԴԱՆՅԱՆ

1

1ա

Ձերդ գերազանցութիւն
ողորմած տէր

Նոյեմբեր ամսին Հին Նախիջևանից վերադառնալով Ս. Էջմիածին, մեծ. պ. Կ. Կոստանյանի[1] միջոցավ ընդունեցի Ձեր ընտիր աշխատությունը[2] իբրև նվեր ինձ ուղարկված. մեծ ուշադրությամբ և լարված հետաքրքրությամբ կարդացի և դրել եմ «Արարատ» ամսաթեր-

---

** Այժմ 133 համարի տակ պահվում է Մաշտոցի անվան Մատենադարանի անտիպ ձեռագրացուցակների հավաքածուի մեջ, ուր բերվել է ՀՍՍՀ ԳԱ պատմության ինստիտուտի արխիվից (գործ 201—267)։*

*** Օգտագործել ենք այդ նյութերի՝ ՀՍՍՀ պետական կենտրոնական պատմական արխիվում գտնվող մանրաժապավենից պատրաստված լուսանկարները։*

թում ընդարձակ գրախոսական հոդված՝ 13 երեսից բաղկացած[3]։ Կամենում էի շնորհակալությանս հետ հոդվածս էլ Ձեզ ուղարկելու հնարավորություն ունենալ, բայց որովհետև ինձ համար անակնկալ կերպով, ըստ հրամանի Վեհափառ հայրապետի ազգիս[4], կարգվեցի Շամախվո կոնսիստորիայի նախանդամ՝, ուստի խնդրում եմ համիձ գրածս կարդալ «Արարատ» թերթում և ես իմ նոր պաշտոնատեղիցս հայտնում եմ իմ խորին շնորհակալությունը Ձեր ուշադրության համար։

Ս. Էջմիածնի մատենադարանի ձեռագրաց լիակատար ցուցակը[5] մինչև վերջին համարը արդեն պատրաստել եմ. պատրաստվում էի
1բ տպագրության համար միջոցներ || ձեռնարկել, մեծավորիս կամքը անորոշ ժամանակով ուշացրել է այդ գործը. հույս ունեմ Բագու քաղաքում մեկենաս գտնել, մանավանդ որ ծախքը՝ 13.000 ռ[ուբլի]. հազիվ թե վանքը համաձայնի տալու. գուցե ուրիշ անգամ վստահանամ այս առթիվ Ձեզ անհանգիստ անելու։

Ձեր կենաց համար աղոթարար
մնամ հարգանոք Մեսրոպ վարդապետ Տեր-Մովսեսյանից

1898 թ. 26-ն հոկտ.
ի քաղաքն Շամախի

2

2ա ||Ձերդ գերազանցություն.
Գերասիմ Արտեմիչ

Պետերբուրգից ահա 16 օր է հեռանալս և այսքան ժամանակում կարողացա բավական նյութերի հետ ծանոթանալ, որոնց մասին կ՝ցանկանայի համառոտակի Ձեզ տեղեկություն հաղորդել. Մոսկվայի Ռումյանցև թանգարանում կան 4 հատ հայերեն ձեռագրեր, երեքը այս դարու արտագրություն, մեկը՝ պ. Երիցյանի Սանահնում գտած քարացած ձեռագրերից[1]. 151 հատոր ձեռագրեր կան Լազարյան ճեմարանում[2], երեքի վրա էջմիածնի գրատան կնիքը էմֆենճյանի ժողովածուից՝ այնտեղ ուղարկված, 41 օրինակ պ. Խալաթյանի[3] և 8 օր. պ. Հովհաննիսյանի[4] մոտ։ Սկիզբը կամենում էի այդ բոլորից միայն քաղվածքներ անել, բայց մտածելով որ գործ դնելիք աշ-
2բ խատանքի մեջ || ժամանակամիջոցի <մեջ> զանազանությունը միայն երեք օր պետք է լինի, լավ համարեցի ցուցակագրել հարկավոր մանրամասնությամբ, մանավանդ որ պ. Խալաթյանը կամք հայտնեց հաջողեցնել տպագրել տալ ի հաշիվ Լազարյան ճեմարանի։ Այդ երկու հարյուր չորս ձեռ[ագրերի] մեջ նշանավոր և ուշադրության արժանի շատ քիչ բան կա, նշանավոր են կարող լինել մի երկու ինձնից առաջին անգամ նկատված կրկնագիր օրինակներ, որոնց սկզբնագիրը, սակայն, որոշել չկարողացա։ Բայց մի բան անհերքելի է. նյութի շատությունը աննշան հատիկներ պարունակելով, գումարով արդյունք է տալիս։

Անհամեմատ ավելի կարևոր են այստեղի՝ Նոր Նախիջևանի եկեղեցիների ժողովածուները. դրված բոլոր եկեղեցիներում, մեծավ մասամբ Ս. Լուսավորիչ եկեղեցում։ Այստեղ մի ուրախալի երևույթի պատահեցի. Հոգևոր դպրոցի երկու ուսու||ցիչներ՝ պպ. Ներ. Շահաղիզյան և Աբ. Զամինյան արդեն երկրորդ տարին է սկսել են կազմել այդ ձեռագրերի ցուցակները և ինձ խոստացան այլևս չդանդաղել, այլ աշխատել անպատճառ այս ամառ վերջացնել։ Նոքա հույս ունեն, որ կարող կ՝լինեն եկեղեցու հաշվով տպել տալ։ Այդ հանգամանքը ստիպեց ինձ բավականանալ միայն համառոտ տեղեկություններ քաղելով, թեև դժոխային աշխատանք կրեցի։ Ամբողջ ժողովածուն, թվով 258 օրինակ[5], բաժանեցի ըստ նյութերի, համաձայն իմ ծրագրի. բոլորը համարագրեցի թերթիկներ կպցնելով, տարեթվերով և համարներով. խառն ՝ի խուռը իրար վրա թափված հատորները որոշ կարգի մեջ մտցրի։

3ա

Ժողովածուի նշանավոր, ուշադրության արժանի օրինակներն են. մի Ճառ||ընտիր, երկու Ոսկեփորիկ, մանավանդ Հիսուսի տղայության ավետարանը ՈՂԳ (1244) թվից, 62 Ավետարան, 25 Ճաշոց, 32 Հայսմավուրք և այլն, որոնց հիշատակարաններն անբավ տեղեկություններ են պարունակում Կաֆայի և Ղրիմի հայերի պատմության մասին։

3բ

Թե՛ Մոսկվայում և թե՛ այստեղ առավոտները ժամի 7-ից մինչև երեկոյան 10 [-ը] միայն ձեռագրերի հետ գործ ունենալով, ներեցեք, որ այս նամակով անկարող եմ Ձեզ որևէ ուրիշ տեղեկություն գրել։ Այստեղ շատ ուրախ են Պետերբուրգի եկեղ[եցական] խորհրդի տարեկան 4000-ական ռուբլի օգնություն տալու որոշման վրա։

Խնդրեմ, ընդունեցեք հարդանացս ողջույնները, բարևում եմ նաև Աննա Արտեմենային։

Միշտ հարգանոք՝
Մեսրոպ վարդապետ

1901 թ. մայիսի 17.
Նոր Նախիջևան

3

4ա || 1901 թիվ, 25 հուլիսի,
ի Ս. Էջմիածին

Վսեմապատիվ տեր
Գերասիմ Արտեմիչ

Մի նամակ Ձեզ գրեցի Նոր Նախիջևանից. այս երկրորդն է, որ գրում եմ Ս. Էջմիածին հասնելուց 24 օր հետո։ Շոգերն անտանելի են, ահա այն բացատրությունը, որ հույս ունեմ ընդունելի կ՝համարվի իբրև պատճառ լռությանս։ Ուղիղ երկու ամիս ճանապարհորդեցի. թեև իմ սկզբնական ծրագրի մեջ չէր մտնում, Բագվից որոշեցի Շուշիի վրայով գնալ Ղափան, իմ հայրենիքը՝ այցելության տարիներից ՝ի վեր չտեսած ծնողներիս և ազգականներիս, և երանի թե, զիջանելով նոցա թախանձանքին, փոքր ավելի մնայի հայրենիքիս հովասուն լեռներում.

4բ շտապում էի ժամանակ չկորցնելու, մինչդեռ ահա || մի ամիս է և ոչինչ չեմ կարողանում կատարել։ Կաթողիկոսական արխիվի թղթերին չեմ էլ մտածել մոտենալու, այդ աշխատանքը թողնելու եմ ավելի հով ժամանակի, իսկ դիսերտացիայիս[1] մասին կատարածս հույս է տալիս, որ ընտրած թեմաս տալու է նորություններ։

Ձեր նամակը տվի Վեհափառին և յուր առաջարկությամբ ինքս կարդացի. ապա բացատրեցի բովանդակության երկու կետերը՝ Մոսկվայի եկեղեցուն փող տալու և Տեր-Կոստանդի խնդիրները։ Դժվարանում եմ, ի՞նչ հաղորդեմ Ձեզ. «էհ, կըսին որ փողն արդեն տվել են, Տեր-Կոստանդին էլ չեն ընդունել», և ամբողջ խոսակցությունից երե-

5ա վում էր. «Բան || մ՝էր դրեցի, չեն ուզեր, թող չկատարեն»։ Իսկ որդեգրի խնդիրը այսօր կատարվեց. 20 քահանաների որդիների ցուցակն արդեն կազմված և ուղարկվելու էր ճեմարանի վարչության, երեկ Լաղարյան ճեմարանի տեսուչը հեռագրով հայտնել էր, որ 19 ընդունվել են, իսկ 20-րդը հասակի պատճառավ չէ կարող ընդունվել։ Վեհափառի Դիվանից այսօր հեռադիր ուղարկվեց 20-րդ հաշվել Ձեր առաջարկած տիկնոջ որդուն։ Իսկապես, դժվարանում էին այդ առաջարկությունն անելու, որովհետև խորհրդիդ վճռի մեջ ասված է, որ որդեգիրները քահանաների որդիք պետք է լինին, ես առարկեցի. «Այդ խնդիրը հարուցվել և լուծում է ստացել մեծ. Եզյանի ձեռքով, եթե նա իմանար որ չէր կարելի, չէր էլ միջնորգիլ»։

5բ ||Սանասարյան դպրոցի ձեռագրաց ցուցակի տպագրությունը դեռ մնում է, ինչպես գրեցի. Շուշիով անցա և Թիֆլիզ չհանդիպեցի, որպեսզի այնտեղի տպարանատերերի հետ խոսակցեմ. ճեմարանի ուսուցիչներից Եզնիկ վարդապետը[2], որ միևնույն ժամանակ վանքիս տպարանի տեսուչն է, գնացել է ամառանոց, նորա ներկայացուցչի հետ խոսացի և նա հնարավոր է գտնում Ձեզ արդեն ցույց տված մեծությամբ գրքի մամուլը, խառը տառերով շարել և տպագրել՝ մամուլը 16 ռուբլիով, այնպես որ եթե համաձայն եք, խնդրեմ գրեցեք, կամ հեռագրեցեք և ես ցենզորի թույլտվություն ստանալով, կսկսեմ շարել տալ։

Հարգանքով ողջունելով Ձեզ, Աննա Արտեմևնային և օր. Բաղտանյաններին։

Մնամ աղոթարար
Մեսրոպ վարդապետ

4

6ա ||Վսեմապատիվ տեր
Գեորգիմ Արտեմևիչ

Օգոստոսի 4-ին Ձեր գրած նամակը ստացել եմ. Վեհափառ հայրապետը մոտ երկու շաբաթ բացակա էր վանքից և թե՛ Հուսիկ սրբազանը[1] և թե՛ ես ուշ խոսացինք նրա հետ Ձեր նամակում շոշափած խնդիրների մասին։ Վեհը ժամանակին ստացել է Ներսես արքեպիսկոպոսից՝ 150 000 ռուբլու առթիվ եղած գրագրության պատճենները.

իշխանն էլ արտասահմանից հաղորդել էր դեպարտամենտի մերժողական պատասխանը և ավելացրել, որ Պետերբուրգ վերադառնալուց հետո անձամբ կ՝տեղեկանա մերժման պատճառները և կդրե Վեհին։ Հույս և հավանականություն կա, որ այստեղից այլևս այդ խնդրի մեջ միջամտություն տեղի չունենա, բայց միայն հույս[3] է։

6բ ||Դպրոցների մասին «Նոր-Դարի» հաղորդածը[4] դիտավորյալ շինծու լուր էր. ոչ Վեհարանում և ոչ էլ Սինոդում մինիստրությունից կամ այլ տեղից ոչ մի թուղթ չէ ստացվել։ Լուրը կապ ուներ, ինչպես հետո պարզվեց, տպասելիք այն նոր կարգադրության հետ, որ խորհուրդ էին տվել կաթուղիկոսին և սա ի կատար ածեց, թեմական դպրոցների համար ընտրել կամ նշանակել հոգևորական տեսուչներ։ Իսկ այդ կարգադրության հետևանքն այն է, որ այսօր Թիֆլիզի և Երևանի դպրոցները տեսուչներ չունեն. Երևանում գարնան[ը] 7 ուսուցիչ էին արձակել տեսչի, առաջնորդի և հոգաբարձության միաձայն վճռով։ Սուքիասը՝ համաձայնելուց հետո, գաղտնի հորդորել էր ուսուցիչներին բողոք տալ կաթուղիկոսին, ինքն էլ յուր կողմից համոզել էր կաթուղիկոսին

7ա անվավեր ճանաչել՝ հոգաբարձության միաձայն կատարած որո||շումը. մինչդեռ այդ իսկ որոշմամբ հոգաբարձուները նոր ուսուցիչներ էին հրավիրել։ Այժմ ստեղծվել է այսպիսի մի դրություն. Երևան են եկել նոր հրավիրված ուսուցիչները. կաթուղիկոսը մի երկու օր առաջ կոնդակով չարձակված է ճանաչում արձակված ուսուցիչներին, առաջնորդը վերջիններիս է պաշտպանում, հոգաբարձուները՝ նորերին։ Սպասվում է մեծ անհամություն։ Շուշվա թեմական դպրանոցն էլ մինչև օրս չունի ուսուցչական խումբ. Ճեմարանի ուսուցիչներից մեկին՝ մի վարդապետի հրավիրել էին. կաթուղիկոսը ուղիղ երեք անգամ հեռագրով յուր համաձայնությունը տալուց հետո, այժմ դարձյալ փոխել է յուր երդիցս կրկնած հրամանը։ Հարկավոր չէ դրսի սպառնալիք։ Հուսիկ սրբազանը օգոստոսի 29-ին ճանապարհ ընկավ Մոսկվա, հավա-

7բ նական է տեսնվիք, նա կ՝պատմե մանրամասնությունները։ || Ճեմարանի մեջ չկան երեք թե չորս ուսուցիչ։

Ես, հավանական է, դեռ մի երկու ամիս էլ մնամ այստեղ. արդյոք համաձայն չէ՞ք Սանասարյան վարժարանի ձեռագրաց ցուցակը այստեղ տպագրելուն, մամուլը խառը շարվածք՝ 17 ռուբլի վճարով։ Խնդրում եմ, գրեցեք Ձեր կարծիքը և ուղարկեցեք Կաբինից ստացված նկարագրությունը[6]։

Վեհափառը պատվիրել է ինձ խնդրելու Ձեր միջնորդությունն ու աջակցությունը Երևանի դպրանոցն ավարտած՝ Հովհաննիսյան Մկրտիչ անվամբ մեկի համար, որը նկարչական ձիրք ունի և ցանկանում է մտնել Շտիգլիցի վարժարանը, բայց չքավոր ծնողների զավակ, կարոտ է օգնության. խնդրում եմ եկեղեցու միջոցներից նրան նպաստ նշանակեցեք, որ կարողանա մտնել յուր ցանկացած դպրոցն ու ուսումը շարունակել։

---

* Այստեղ հեղինակի ձեռքով գրված և ջնջված է «Սուքիասս» բառը։

Հազիվ մի շաբաթ է մեզ մոտ սկսել են տանելի եղանակներ և հնարավոր է դարձել կանոնավոր պարապմունքը։

Ձերդ վսեմության միշտ հարգող և ձեզ համար աղոթող
Մեսրոպ վարդապետ

1901 թ. Օ-ն օգոստոսի
ի Ս. Էմիածին

5

9ա ||Մեծարգո բարեկամ

Մոսկվայում իմացա, որ առաջնորդը[1] եկել է Նոր Նախիջևան. Քիշինև դնալու հարկ չեղավ։ Այստեղ են Նահապետ և Վահան վարդապետները[2]։ Մի քանի անդամ տեղի ունեցան խորհրդակցություններ։ Առաջնորդը խոստովանում է, որ ինքը սխալվել է, նա պատրաստ է կատարել ծխականների խնդիրքը, բայց խղճահարվելով, չի կամենում նյութապես վնասած լինել Մնացականյանին։ Խոսք եղավ թեմի զանազան քաղաքների մասին և նա որոշեց քահանային անմիջապես փոխադրել Կիև՝ 'ի նկատի ունենալով նրա երեխաների կրթությունը, որոնք Մելիտոպոլում և ուրիշ որևէ քաղաքում զրկված կ'լինեն։ Միայն նա սպասում է, որ խորհուրդը նյութապես նրան կապահովի։ Նա ասում է. Մնացականյանը Պետերբուրգում ստանում էր բնակարան և
9բ 1300 ռուբլի || ռոճիկ, նա նրան կ'փոխադրի Կիև տարեկան 1500 ռ. ռոճիկով, եթե խորհուրդը չհամաձայնի՝ նա կ'հրաժարվի որևէ ուրիշ կարգադրություն անելուց։

Գերասիմ Արտեմևիչ, հատուկ խնդրում եմ, կատարեցեք առաջնորդի ցանկությունը. այդպիսի գումար տալիս եք Խարկովի քահանային, Մնացականյանին, որ երկար տարիներ ծառայել է Ձեզ մոտ լավվատ, այդ գումարը շատ միք համարիլ և հարցը հեշտությամբ կ'լուծվի։ Եթե դեմ չեք և շատ չեք համարում այդ գումարը, Ձեր ցանկությունը շուտով գրեցեք Նահապետ հայրսուրբին և նա իսկույն թուղթը գրել կ'տա։

10ա ||Առաջնորդը կամենում է դեռ երկու-երեք շաբաթ այստեղ մնալ, շրջել գյուղերը և ապա վերադառնալ Քիշինև։ Մոսկվա և Պետերբուրգ գալու ցանկություն չունի։ Նա շատ է տրամադրված կատարելու Ձեր ցանկությունը և վերոգրյալ մտքով կամենում էր արդեն կարգադրություն անել, բայց խոսելով Նահապետ հայրսուրբի հետ, բարվոք համարեցինք նախապես գրել Ձեզ, ստանալ Ձեր համաձայնությունը և ապա պաշտոնական թղթեր գրել. մեկը խորհրդի անունով Մնացականյանի տեղափոխության և ռոճիկի համար, մյուսը՝ հրաման քահանային,
10բ վերջացնել գործերը և || գնալ Կիև։ Մնացականյանը այժմ Ձեզ վրա ավելի թանգ է նստում. Դուք մի սարկավագի տեղ երկուս եք պահում, եթե նրան տարեկան տաք 1500 ռ., թե՛ դրամական շահ կունենաք և թե՛ Ձեր ցանկությունը կատարված կ'լինի։

Ինչպես տեսնում եք, սաստիկ վատ եմ գրում և դրա համար կարճ գրեցի։ Նահապետ հայրսուրբը կ'սպասի Ձեր նամակին, կուզեք իրան՝ առաջնորդին գրեցեք։

Ձեզ միշտ հարգող և աղոթող Ձեր կենաց համար՝
Մեսրոպ վարդապետ

$19\frac{18}{I}03$, Նոր Նախիջևան

6

11ա ||Մեծարգո/բարեկամ Գեորգիմ Արտեմիչ

Ահա մի շաբաթ է հասել եմ Ս. Էջմիածին, դեռ որևէ պարապմունք չեմ սկսել, մինչև բնակարանս կ'տաքանար և փոքր-ինչ կարգը կ'ընկներ. ճանապարհին ամենից երկար մնացի Բագու և Թիֆլիզ քաղաքներում, երկուսումն էլ ոչ առանց գործի։ Բագու ինձ հաջողվեց մի պարոնից՝ Դավիթ Յուզբաշյանից, 15.000 ռուբլի գումար ստանալ վանքի մեջ գրադարանի համար մի հատուկ շինություն կառուցելու[1]։ Հին շի-
11բ նությունը, ինչպես գիտեք, խիստ անհարմար է և պարա||պելու սենյակ չունի, որի պատճառավ ձեռագրերը աալիս են ոչ միայն միաբաններին՝ իրենց խցերը տանելու, այլ նաև ուսուցիչներին՝ գյուղում պարապելու համար։ Շինության նախագիծը կ'պատրաստվի Թիֆլիգում՝ հմուտ ճարտարապետների ձեռքով։ Թիֆլիզում երկար մնալուս պատճառը դարձյալ գրադարանի խնդիրն էր. հանգուցյալ Երիցյանի գրադարանը գնել է հիշյալ պարոնը՝ վճարելով 8000 ռ[ուբլի], ես վերցրի ցուցակները և ստուգելով ամբողջ մատենադարանը՝ 13 արկղ, 1 օրում ուղարկեցի Էջմիածին[2], ուր արդեն ստացվել և պահվում են փակված՝ մինչև շինության պատրաստությունը։

12ա Վանքում Նորին Վեհափառությունը || ընդունեց ինձ հաճույքով, սրտակից էր միաբան եղբայրների հանդիպումը։ Իմ ստացած տպավորությունը առժամանակյա բացակայությունից շատ և շատ նպաստավոր է. միաբանության կազմը անպայման ավելի պատրաստ է լավ մտքեր ընդունելու, մտավոր հորիզոնը՝ շատ ավելի բարձր, քան երբևէ, եթե պակասում է մի բան, այդ ցաք ու ցրիվ ուժերի միացնող տարրն է։ Վեհափառը շատ է ծեր, հոգնած, այդ տարրը պետք է ներկա պայմաններում երևան գա միաբանության մեջ։ Այդպիսի մի թեթև փորձ արի և խիստ հաջող անցավ. թույլտվությամբ Վեհափառի, երեկ ինձ մոտ
12բ հրավիրեցի ամբողջ միաբանությունը և միաձայն որոշե||ցինք շաբաթը մի անգամ հավաքվել, գասախոսություններ կարդալ և պարապել գիտական խնդիրներով։ Քսան ու վեց միաբաններից բացակա էին չորսը. միայն մեկը՝ ոչ հարգելի պատճառով։ Ես մի զեկուցում կարդացի իմ գրքի[3] մասին և ապա սկսվեց շատ կենդանի վիճաբանություն. միաբանները հեռացան շատ լավ տրամադրությամբ և հավատացած եմ, որ այդպիսի ժողովները իրար կ'մոտեցնեն միաբաններին և կազդեն գործերի վրա։

*Ձեր ձեռագիրը[4] Թիֆլիզում պարոն Մ. Կարադյոզյանից[5] ստացա.
խոսացի Կարապետ վարդապետի՝ «Արարատի» խմբագրի հետ, որ
տպագրելու վճիռը սպասում է կաթուղիկոսից։ Կաթուղիկոսին հայտ-
նեցի Ձեր ուղարկելիք մատանիների մասին[6], թուղթը դեռ չեմ ներկա-
յացրել։*

Ձեր կենաց համար աղոթող և Ձեզ սրտանց հարգող

Մեսրոպ վարդապետ

19$\frac{I}{21}$03

ի Ս. էջմիածին

*[Հ. Գ.] Նամակս գրած պատրաստ էր, պ. Մելիք-Կարագյոզյանից
ստացա մի գրություն, որով շուտափույթ ետ է պահանջում Ձեր ձե-
ռագիրը. ենթադրելով, որ Ձեր կողմից նոր կարգադրություն է եղել,
ձեռագիրը այսօր ուղարկեցի նրան։*

[Մեսրոպ վարդապետ]

7

21ա **‖Ձերդ վսեմություն
մեծարգո բարեկամ Գերասիմ Առաեմևիչ[1]**

*Որքան էլ գուք խորհուրդ էիք տալիս վանքի մեջ պաշտոն չընդու-
նել, կարելի չեղավ. անելու գործ չափից դուրս շատ և մեջտեղ եղող
բոլոր երևացող մարդիկ սաստիկ ծանրաբեռնված էին։ Սեպտեմբերի
26-ին նշանակված է մյուռոնօրհնություն, այդ մասին ապրիլ ամսվա
«Արարատի» մեջ հայտարարվում է։ Ահագին աշխատանք է հարկա-
վոր. կարգի բերել վանքի արտաքին երևույթը, քանդել հին, խարխուլ
ավերակները, պատրաստել կացարաններ, պատրաստել «ուղ<ղ>ե-
ցույցներ—*quides*», կարգավորել մատենադարան, թանգարան, որ-
պեսզի մերազնյա և օտար հյուրերի, ուխտավորների առաջ ամոթով
չմնանք։ Որոշեցի մինչև սեպտեմբեր ամիսը գրականությամբ պարա-
պել միայն ազատ ժամերիս և մասնակցել հիշածս գործերից շատերի
մեջ և որովհետև համեմատաբար ավելի ես եմ պաշտոններից ազատ,
ավելի մեծ մասնակցություն ունեմ։ Վանքի երիտասարդ միաբանների
մեջ կա հայտնի ոգևորություն, սիրով և միաբանությամբ գործելու
ցանկություն։ «Արարատ» թերթը, որ ամիսներով ուշանում էր և եր-
բեք չեմ հիշում որ ամսվա համարը նույն ամսում լույս տեսներ, մար-
21բ տի համարը հասցրինք, մյուս ամիսներինը այդպես ‖ կ՚շարունակվի և
այդ շնորհիվ այն հանգամանքի, որ խմբագրությունն ու տպարանի
վարչությունը միացրել ենք և միմյանց վրա հսկում ենք։ Շուտով
կ՚սկսվի Մատենադարանի շինությունը[2], Մայր տաճարի վերանորոգու-
թյունը[3]. հավանական, նաև Վեհարանի շինություն, որի քարն ու ավա-
զը մասամբ բերված է։ Վանքում կա կյանք և գործունեության մեծ
ցանկություն։ Կա մի ուշագրավ երևույթ ևս. բոլոր հին միաբանները,
եպիսկոպոսներ և վարդապետներ, ուրախությամբ տեղի են տալիս*

նոր միաբաններին և ոչ միայն չեն խանգարում, այլ և շատ են ուրախ նորերի գործունեությամբ։

Ես երբեք չեմ մոռանում Ձեր հաճախակի կրկնված բացականչությունը. «Ե՞րբ պետք է մի լավ. մխիթարական բան լսենք»։ Հույս ունեմ, որ իմ հաղորդած բարի լուրերը Ձեզ փոքր ինչ կ'մխիթարեն։

Շնորհակալությամբ ստացա Ձեր ուղարկած երեք մատանին և երբ Թիֆլիսից վերադարձավ Վեհափառը, իրեն ներկայացրի։ Նա խոստացավ անձամբ Ձեզ նամակ գրել. իսկ ինձ էլ ասաց. «Երկուսին մեկը քեզ կուտամ»։ Միայն թե ինքս չեմ շտապում մատանիով զարդարվել։ Վեհի հետ խոսացի Պոպովի կտակի[4] մասին, նա ինձ տվեց կարդալու այդ մասին տեղի ունեցած գրագրությունը։ Համառոտությունը Ձեզ հաղորդեմ.

22ա ||Վեհափառը Տեր-Հարություն քահանայի միջոցով գրել է տիկին Պոպովին, որ կ'կամենար նրա ամուսնու կտակած գումարով Ս. Կարապետի վանքում «Պոպովյան» դպրոց հիմնել և տարվույս հունվարի 17-ին ստացել է տիկնոջ համաձայնությունը, թեև տիկինը միևնույն ժամանակ գրում է, որ նախապես կ'խորհրդակցի յուր քեռի Իսահակ Ալաճալյանի հետ։ Երկրորդ նամակը գրել է Տեր-Հարությունը փետրվարի 19-ին, որի մեջ հայտնում է, որ տիկինը խոստացել է Սանասարյան դպրոցը մտած սաներին չզրկելու համար յուր միջոցներից հոգալ նոցա ծախքը, մինչև սաների ավարտելը, իսկ 50 000 ռ[ուբլի] կ'կարգագրի յուր Ստավրապոլի կանտորից տեղափոխել Վեհափառին՝ Ս. Կարապետի վանքում դպրոց բանալու։ Տիկինը այդ միջոցին գնացել է արտասահման և յուր խոստումնագիրը չի ուղարկել. Վեհափառը սպասում է այդ թղթին, որով թե՛ Սանասարյան դպրոց մտած սաները չեն զրկվիլ և թե՛ մի նոր դպրոց կ'բացվի։ Երբ որևէ նոր գրություն ստացվի, Ձեզ կ'հաղորդեմ. ես չգիտեմ թե ինչ է Ձեր կարծիքը տիկնոջ վերջին խոստման մասին, որպեսզի ըստ այնմ խոսեի Վեհափառի հետ։

Թեև այդ տեղից հեռանալիս Ձեզ հետ խոսացի, որ այստեղ տպագրեմ Սանասարեան ձեռագրերի ցուցակը, բայց դարձյալ հարկ եմ համարում գրել Ձեզ այդ մասին, որ ձեռագիրը ուղարկել եմ Թիֆլիզ՝ ցենզորին և մինչև մի երկու շաբաթ կ'սկսեմ տպագրությունը։ Այն շարվածքը, որի համար Պետերբուրգում վերցնում էին 17 ռուբլի,
22բ չհ||շված տպագրությունը, ես հույս ունեմ, որ այստեղ կանի տպագրությամբ միասին 10—12 ռուբլի, ոչ ավել։

Օր. Շուշանիկ Բաղտանյանի Библиография-ն[5] «Արարատի» մեջ մինչև սեպտեմբեր ամիս չենք կարող տպագրել. մեր ցանկությունն է այդ ժամանակամիջոցում «Արարատի» համարներում տեղ տալ Էջմիածնի մյուռոնօրհնության վերաբերյալ ընդարձակ նյութերի։ Այդ այնպիսի ժամանակամիջոց է, որ արժե և անհրաժեշտ է Էջմիածինը ծանոթացնել մեր ժողովրդին։ Ես շատ ցավում եմ, որ պ. Մելիք-Ղարագյոզյանը այնպես շտապ և փոքր ինչ խիստ նամակով ձեռագիրը ինձնից ետ պահանջեց և ես չկարողացա բնագիրը խմբագրության անդամներին ցույց տալ, որոնց ունեցած տեղեկությունը միայն իմ հա-

ղորգածն է։ Ես կարող եմ խոստանալ մինչև հունվար հաջողացնել այդ աշխատության տպագրությունը։

Աստվածաշնչի տպագրությունը, ինչպես գիտեք, արդեն սկսած է. գործը առժամանակ կանգ է առել, որովհետև Կարապետ վարդապետը՝ յուր տպած առաջին մամուլի համար կարծիքներ է ժողովում և երկրորդ՝ որովհետև տպարանում այդպիսի մեծ և պատասխանատու գործի տպագրության համար մի քանի անհրաժեշտ գործիքներ են պակասում։ Մենք չունենք տպագրության թերթերը սեղմելու, հղկելու գործիքներ, չունենք նկարները տպելու գործիք։ Վեհափառի ցանկությունն է այդ գործիքների ծախքը խնդրել Ձեր խորհրդից։ Ես բարվոք համարեցի նախապես գրել Ձեզ և հատկապես խնդրել Ձեզ, որ խորհրդում ընթացք տաք Վեհափառի կոնդակին։ Մեր տպարանում կա մի վերին աստիճանի համեստ և յուր գործը լավ հասկացող վարպետ. ես խորհուրդ տվի ուղղակի նրան ուղարկել Պետերբուրգ, որպեսզի նա, որին կարելի է միանգամայն վստահել, ընտրի և ցույց տա գնելիք գործիքները։ Նահապետ հայրսուրբը այդ վարպետին լավ է ճանաչում և կարող է իմ ասածը հաստատել։

Դերասիմ Արտեմևիչ, հատուկ և շատ խնդրում եմ, նպաստեցեք այս գործին և վանքին մեծ բարիք կ'լինեք արած։

Ընդունեցեք իմ սրտանց բարևները, Ձեր քաջառողջության համար աղոթող և Ձեզ հարգող

Մեսրոպ վարդապետ

[Ապրիլ 1903 թ.]

8

13ա ||Ձերդ գերազանցություն
մեծարգո բարեկամ

Ձեր վերջի երկու նամակին միանգամից եմ պատասխանում և խնդրեմ այդ հանգամանքը չհամարեք զանցառության հետևանք։ Մայիս և հունիս ամիսներում մի անգամ գնացի Թիֆլիզ—Բագու մատենադարանի շինության համար հատակագիծ կազմելու և վանքի գործերով. երկրորդ անգամ՝ Թիֆլիզ—Ներկա լինելու պր. Մառի հրավիրած ժողովին[1] և դարձյալ վանքի գործերով։ Վերջի նամակի հաղորդածները 'ի նկատի կառնվեն, ինչ հարկավոր էր կարդացի «Արարատի» խմբագրին, իսկ գրքերն ու անդրին[2] դեռ չեն ստացվել։ Ավելի մանրամասն գրեմ առաջի նամակի պատասխանը.

Գեորգ կաթուղիկոսից Ձեզ նվիրած մատանին դրվել է վանքի թանգարանի մեջ և մուծվել մատյան իբրև անձեռնմխելի իր։ Կաթուղիկոսին գրած Ձեր նամակը կ'տպագրեմ հուլիս ամսվա «Արարատի»[3] մեջ՝ ստացված նվերների ցանկի մեջ։ Վերոգրյալ հանգամանքն էր ուշացման պատճառ։ Պ. Թորոսյանի[4] խնդիրը հանձնել էի Դիվանին
13բ որպեսզի || ընդունված մակագրությամբ տրվի ճեմարանի տեսչին ի տնօրենություն։ Սակայն երևաց, որ տղայի նամակը միանգամայն

անհամապատասխան է, նա ութ տարեկան է, իսկ ճեմարանում 10 տարեկանից պակաս չի ընդունվում։ Դիվանից այդ մտքով պաշտոնական թուղթ գրվեց երեխայի ծնողին։ Երջանկահիշատակ Սանասարյանի կիսարձանը կ՝ընդունվի մեծ շնորհակալությամբ և կ՝տեղավորենք, արդեն խոսացել եմ, կամ ճեմարանի մատենադարանում, կամ՝ վանքի նոր թանգարանում, մինչև նորակառույց մատենադարանի ավարտումը։ Սանասարյան վարժարանի ձեռագրաց ցուցակը դեռ չեմ հանձնել տպագրության, հարմար անձնավորություն էլ չկա, որ արտագրել տամ, Պոլսում տպագրելուն ոչինչ դեմ չունիմ. կաշխատեմ արտագրել և Ձեզ ուղարկել։ Օր. Մանուշակի[5] աշխատության մասին ես իմ կարծիքս հայտնեցի վանքի Ուսումնական հանձնաժողովին՝ ցույց տալով գործի կարևորությունը։ Ամենքը համաձայն էին ինձ հետ. նկատվեց,
14ա որ, իրավ է, «Արարատի» շատ||ընթերցողների համար նման «Библиография»-ն շատ ծանր նյութ է, բայց հաշվի առնելով գործի կարևորությունը և 'ի հարգանս Ձեր միաձայն որոշվեց տպագրությունը։ Իզմիրյանցի կտակի պատճենը գալուց անմիջապես հանձնեցի կաթուղիկոսին և խոսացի դիվանապետի հետ, որ ընթացք տրվի, ուշադրությունից փախել էր և նոր տեղակացա, որ գործը մնում է առկախ. այդ մասին կ'հետևիմ. Առաքել Դավրիժեցու արձանի փողերի մասին խոսացի Բաբկեն վարդապետի հետ. նա փողերը Սուքիաս եպիսկոպոսի ներկայությամբ և գիտությամբ տվել է արձանագործ պ. Մարուքյանին, որը գերեզմանը շինելու պատվերը ընդունել է և դժբախտաբար շինելը ձգձգում է և դեռ չի վերջացրել։ Վարդապետը խոստացավ լրագիրների մեջ հաշիվ տպագրել, իսկ արձանագործը, որ մի քանի օր առաջ էջմիածին էր եկել, ասաց, որ մինչև սեպտեմբեր անպատճառ պատրաստի կունենա[6]։ Ներսես կաթուղիկոսի կոնդակների մասին դժվարանում էի դրել, որովհետև այդ կոնդակների սկզբի համարները ցուցակագրել էի փոքր թերթիկների վրա և քանի անգամ որոնել էի գործերիս մեջ և չէի գտել։ Վերջը նորից մեկիկ-մեկիկ քրքրեցի դոր-
14բ ծերս և գտա նամակների մի կապոցի մեջ։ Ժողովա||ծուն ցուցակագրելիս ամեն մի համարի առաջ նշանակել եմ համարը, որոնցից Ձեր նպատակի համար կարևոր են հետևյալները. №№ 1, 2, 3, 4, 5, 7, 8, 9, 10, 11, 14, 15, 16, 17, 18, 36, 42, 45—55, 59, 185, 197, 201, 218, 229, 230, 231, 395—400, 562։ Բոլորն էլ ավել կամ պակաս չափով շոշափում են Ներսեսի հանրական կաթուղիկոս ճանաչվելը տաճկահայերի կողմից։ №№ 20, 21—29, 38, 205, 393, 394՝ Մոլտավիո և Վալախիո հայոց մեջ ծագած վեճերի առթիվ, որոնք ըմբոստացել էին բարձր հոգևոր իշխանության կարգադրությունների դեմ. հիշյալ բոլոր կոնդակները գտնվում են ժողովածուի առաջին հատորում, երկրորդ հատորը դժբախտաբար չեմ ցուցակագրել, այլ միայն սկսել եմ և հասցրել մինչև 622 համարը[7]։

Կիլիկիո Սահակ կաթուղիկոսի մասին Ձեր գրածը ներկա Հովվապետի կարծյաց հակապատկերն է, որը, ինչպես Ձեզ հայտնի է, եկեղեցական բոլոր փափուկ խնդիրներում խիստ lax հայացք ունի, այդպիսի խնդիրներում նա խորհուրդ ո՞չ հարցնում է և ո՞չ էլ ընդունում։ Պոպովի կտակի մասին ոչինչ նոր բան չիմացա, որ Ձեզ տեղեկացնեմ։

էջմիածնում սկսվել են ամառվա շոգերը, պարապել համարյա անկարելի է։ Կաթուղիկոսը շարունակ ճանապարհորդում է։ Մի 10 օրով այստեղ հյուր մնաց պր. Մառը յուր ընտանիքով[8] և աշխատեցինք, որ դոհ սրտով հեռանա։

Իմ հարգանաց և սիրո ողջույնները Ձեզ. Ձեր արևշատության համար աղոթող

Մեսրոպ վարդապետ

19 $\frac{VI}{27}$ 03

9

15ա ||Մեծարգո բարեկամ
Գերասիմ Արտեմևիչ

Ձեր ուղարկած լրագրերը երեք արկղի մեջ ամփոփված արդեն ստացել եմ։ Արկղերից ամենամեծը ճանապարհին կոտրվել էր և, ինչպես երևում է, լրագրեր են թափվել միջից։ Ես դեռ ժամանակ և հարմարություն չունեցա բանալու, որպեսզի ստուգեմ՝ թե որքան։ Ես այժմ կարգավորում եմ վերջի ժամանակս Ս. Պատկանյանից և ուրիշներից ստացած գրքերը։ Պատկանյանի գրադարանի[1] հայերեն մասը շատ խեղճ է, բայց եվրոպականը՝ շատ արժեքավոր, մանավանդ այն տեսակետից, որ նորա ունեցած գրքերից շատ-շատերը մենք չունենք և ձեռք բերելն էլ ներկայումս դժվար է։ Դուք հարցրել էիք Ձեր օրացույցների ժողովածուի մասին. եթե լրագրերի արկղներում չգտնվին, Ձեր առաջի ուղարկած գրքերի մեջ չկան։

Վանքի կացությունը խիստ ծանր է. Վեհափառը խիստ դյուրագրգիռ է դարձել, կատաղոտ է, մանավանդ-դրամական հարցերում։ Միաբանության միաձայն ցանկությամբ որոշումներ եղան տնտեսություն և մանավանդ կարգ մտցնել վանական կառավարության և ագարակի մեջ. դժբախտաբար անհաջող։ Այսպիսի նեղ ճգնաժամում ճեմարանի երկու աստվածաբան վարդապետներից՝ Հուսիկին[2] ուղարկեց Քիշինև՝ նախանդամ կոնսիստորիայի. Կարսպետին կոնդակ է տվել Երևանի առաջնորդական փոխանորդության համար։ Ճեմարանը մնում է առանց աստվածաբան ուսուցիչների։ «Արարատ»-ը այս ամիսները լույս չտեսավ, հանգամանքների տրամադրության շնորհիվ նյութերը
15բ ուշ պատրաստվեցին, բայց Թիֆլիզ ուղարկվելուց || հետո ցենզորական ատյանը երկու շաբաթ պահեց և ապա պաշտոնական գրությամբ հաղորդեց, որ կառավարչապետի կարգադրությամբ պետք է տպագրվի հունիսի 12-ի «Положение» և մինիստրի հրամանագրությունը հայերեն և ռուսերեն լեզուներով։ Կաթուղիկոսը տակավին չի տվել յուր որոշումը. խմբագիրներին էլ՝ Հուսիկ և Կարապետ վարդապետներին, նոր պաշտոններ է տվել, տեսնենք վերջն ուր պիտի տանի։

Գուցե գիտեք, որ հարքունիս վերցրած կալվածքների մեջ է նաև վանքի պարկը՝ Ներսիսյան անտառը։ Կառավարությունը վանականներին մեղադրում է վատ վարչության մեջ, իսկ այժմ մենք մեր աչքի առաջ տեսնում ենք կատարյալ բարբարոսություն։ Գյուղի տն[ային]

անասունների մեջ չումա հիվանդություն կա, ահա երկրորդ շաբաթն է գյուղի և վանքի հազարավոր նախիրը լցնում են անտառի մեջ՝ այնտեղ քննելու առողջն ու հիվանդը և աղբյուրի ջրով, մեծամեծ դժվարություններով անցած ծառաստանը կենդանիների ոտաց կոխան [են] դարձրել։ Ա՞յս պիտի լինի բարվոք կառավարությունը։

Ծանրանում է երդման խնդիրը. Թիֆլիզի կոնսիստորիայից դիմել [և] բացատրություն են խնդրել. կաթուղիկոսը անհողդողդ մնում է յուր կոնդակի որոշման վրա. ընդունելով երդումը կրոնական արարողություն, պահպանում է հայերեն գրաբար լեզվի անփոփոխությունը։

Մկրտիչ Ղազարյանը արդեն վերադարձել է[3]. նա յուր վարդապետ դառնալը կամ չդառնալը կապում է ներկա անորոշ դրության պարզման հետ. մինչ այդ ընդունել է Հուսիկ վարդապետի պաշտոնը՝ օգնական տեսչի և չորս ժամ դասատվություն։

16ա ||Թեև ոչ կարևոր, ներկա կացության համար բնորոշ է, որ Վեհափառի դիվանապետ Կորյուն վարդապետը[4] հրաժարական է տվել յուր պաշտոնից. մի քայլ՝ որ նա ուրիշ անգամներ էլ է կատարել և մնացել յուր տեղը։

Ձերմ սրտով սեղմելով Ձեր ձեռքը,
միշտ հարգանք՝
Մեսրոպ վարդապետ

19 $\frac{XI}{3}$ 03

10

17ա ||Ձեռ գերազանցություն
մեծարգո բարեկամ

Ձեր հեռագիրը ես ստացա փետրվարի 28-ին, որովհետև մինչ այդ Թիֆլիզումն էի գտնվում։ Բարեբախտաբար պ. Կոստանյանը արդեն խոսացել էր Վեհափառի հետ և յուր ժամանակին եղել էր հարկավոր կարգադրությունը։

Վանքի և վանականների դրությունը դնալով ավելի ծանրանում [է], նորանոր աքսորներ և պաշտոնանկություններ՝ եպիսկոպոսների, վարդապետների և քահանաների հնարավորություն չեն տալիս հանդըստանալու և հանդարտությամբ մտածելու մեր դրության մասին։ Շաբաթ չի անցնում, որ մի նոր խնդիրք մեզ չհուզե։ Վեհափառի առաջ բացակայության ժամանակ—նա մի երկու օրով գնացել էր Սանահին վանքը—նահանգապետը գրել էր սինոդին, որ մինիստրությունից ստացվել է 8000 ռուբլի էջմիածնից տարած գումարի կտրոններ և առաջարկում՝ գնալ ստանալ։ Սինոդը սպասեց կաթուղիկոսի դարձին և նրա անելիք կարգադրության։ Այժմ այդ խնդիրն է հերթական և Կ. Պոլսի պատրիարքի գրությունը, որը յուր եպիսկոպոսների հետ խնդրում է կաթուղիկոսին, որպեսզի ընդհանրական կաթուղիկոսի իրավանց սահմանափակումն տեղի չունենա, արդյոք բարվոք չի՞ համարել Կիլիկիայի կաթուղիկոսին իրեն կաթուղիկոսակից և աթոռակից

հրատարակել։ Հարցը ծանրակշիռ է, մանավանդ որ դրանով եկեղեցու
18ա հիմնական ընտրողական || իրավունքը կարող է խախտվել. ընտրյալ
կաթուղիկոսը յուր իշխանությունը ինչպե՞ս կարող է ուրիշին տալ։

Որքան էլ ծանր է հանգստություն գտնել և մտավոր աշխատանքների մասին մտածելը, բայց ամեն ջանք գործ ենք դնում գոնե «Արարատիս» հրատարակությունը կանոնավոր ընթացքով շարունակել։ Յուր ժամանակին լույս տեսան հունվար, փետրվար համարները և հույս կա այդպես էլ շարունակվի։ Ուստի խնդրում եմ Ձեզ, հաճեցեք ուղարկել օրիորդ Մանուշակի գրախոսական աշխատանքը և ստանալուց անմիջապես կ՝սկսենք տպագրել։ Խմբագրության պայմանն այս է. ամեն մի մասնագիտական հոդված տպագրելով, հեղինակին տրվում է հիսուն օրինակ ձրի արտատպություն, իսկ ավել օրինակների տպագրության համար ստացվում է միմիայն թղթի փող։ Ես Ձեզ հատկապես գրում եմ այդ պայմանը, որպեսզի, ինչպես Դուք ինձ իր ժամանակին ասացիք, այնպիսի կերպարանք չունենա, թե որովհետև Ձեր միջնորդությամբն է, նրա համար է ավել կամ պակաս օրինակ տպագրվում։ Ինչպես կտեսնաք թերթի երկու համարից, նա ավելի մասնագիտական կերպարանք է ստանում, նրա մեջ սկսել են աշխատակցել ճեմարանի բոլոր ուսուցիչները, որոնք հեռացել էին Կարապետ վարդապետի ժամանակ և քանի որ թերթի բովանդակությունը այդպիսին է, օր. Մանուշակի աշխատանքը շատ հարմար է տպագրության և խնդրում եմ կրկին շուտ ուղարկել։

Ընդունեցեք խորին հարգանքներս,
Ձեր քաջ և առողջության համար աղոթող՝
Մեսրոպ վարդապետ

$19\frac{III}{3}04$

ի Ս. Էջմիածին

11

19ա ||Մեծարգս
Գերասիմ Արտեմիչ

Մի քանի օր առաջ Ձեզ նամակ գրեցի և այդ միջոցում արդեն վիճակիս մեջ խոշոր փոփոխություն տեղի ունեցավ։ Բարեկենդանի օրերը գնացել էի Թիֆլիզ. իմ բացակայության ժամանակ ուսումնական հանձնաժողովի մյուս անդամները տպել էին «Արարատի» փետրվարի համարը՝ Հուսիկ եպիսկոպոսի հոդվածը[1] մեջը։ Այդ հոդվածում Կիլիկիայի Մկրտիչ կաթուղիկոսի մասին ի միջի այլոց եղել է այսպիսի մի նախադասություն. «Այս Մկրտիչը այն Մկրտիչներից էր, որոնց համար խոսք տալը և չկատարելը սովորական բան էր և արդարանում էր ասելով. «Ասածս խո Պիղատոսի գի՞րը չէր»։ Այդ բառերը Խրիմյանի
19բ սովորական դարձվածն է և նա կարդալով այդ, սաստիկ վրդովվել || էր և հրամայել թերթը նորից տպել՝ հանել տալով այդ բառերը։ Նա հոդվածագրից ավելի ինձ վրա էր բարկացել և Թիֆլիզից եկա թէ չէ, կանչեց մոտը և պատվիրեց որ պաշտոնով կամ անպաշտոն հեռանամ

Պետերբուրգ. պատրվակ էր, «որպեսզի անտեղեն մեզ լուրեր հաղորդես»։ Նույն օրը Եղիշէ վարդապետին[2] խմբագիր կարգեց, Մամբրէ վարդապետին[3] տպարանի տեսուչ, ինձ արձակելով այդ գործերի մասնակցությունից։ Հոդվածի խոսքերը պատրվակ էին. ես խմբագիր չէի, կաթուղիկոսը այդ լավ դիտե, հունվարի համարը ես էի կարգադրել, հայտարարությամբ կաթուղիկոսից խնդրել, որ հաճի խմբագիր կարգելու. եթե էջմիածնում լինեի, հիշյալ բառերը Հուսիկ եպիսկոպոսի հոդվածից անպայման կ՝ջնջեի, համարելով անտակտություն, բայց քանի որ բացակա էի, պատասխանատու կարող էին լինել հանձնաժողովի մյուս անդամները։ Իրողությունն այս է, որ կաթուղիկոսը
20ա վանքից հեռացնում է ազդեցիկ || ե աչք ունեցող միաբաններին. տարվա կիսից ճեմարանից հեռացրեց Կարապետ և Հուսիկ վարդապետներին, իմ մասին էլ նույն վճիռն էր կայացրել, այսօր-վաղն էր ձգում և այսօր առիթից օգտվում է։ Բարեբախտաբար, օրինական իրավունք ունեի իմ գալը հետաձգելու, որովհետև Զատկի շաբաթը կանչված եմ Աղեքսանդրապոլ՝ իբրև վկա այնտեղի ցույցի, և մինչ այդ հարկ եմ համարում Ձեզ գրելու և խնդրելու հետևյալը.

Վեհարանում իշխում են Կորյուն և Խորեն[4]. ոչ մի խորհուրդ տալ, ոչ մի գաղտնիք պահել տալ չի լինում։ Այս մի տարվա մեջ այնքան արյուն փչացրի, այնքան եռանդ կորցրի, որի կեսը եթե ուրիշ պայմաններում գործ գրած լինեի, որևէ օգուտ կունենայի, իսկ այստեղ բոլորը ի զուր անցավ և այդպես էլ կ՝լինի, քանի պայմանները չեն փոխվել։ Ես լսելով կաթուղիկոսի հրամանը, կ՝գամ Պետերբուրգ[5], բայց չէի ցանկանալ, որ այդ լիներ առանց ժողովրդի գիտության և միջամտության, ուստի խնդրում եմ Ձեզ, իբրև իմ լավագույն բարեկամ,
20բ || որ գործ դնեք Ձեր ազդեցությունը, որպեսզի իմ այդտեղ գալը պատվավոր ձևով լինի, այսինքն թե ժողովուրդը յուր համաձայնությունը տար և թե իշխանը չհակառակեր։ Այս մտքով ես ցանկանում եմ, որ չլինի թե ինչ որ Հ. Մնացականյանի հետ պատահեց[6], նույնն ինձ պատահի. այսինքն գայի կաթուղիկոսի կոնդակով և ժողովուրդը ընդդիմանար, որ ինձ համար խիստ անհաճելի կ՝լիներ։

Խորին հարգանքով առ Ձեզ և Ձեր առողջության համար աղոթող

Մեսրոպ վարդապետ

19 $\frac{II}{15}$ 04

ի Ս. Էջմիածին

ԿԱՐԱՊԵՏ ԵՂՅԱՆԸ ՄԵՍՐՈՊ ՏԵՐ-ՄՈՎՍԻՍՅԱՆԻՆ

23ա ||Արժանապատիվ հայր

Մեսրոպ վարդապետ Տեր-Մովսիսյան

Հուսով եմ նամակս անկորուստ ստացել եք յուր ժամանակին և ինչ որ հարկն է տնօրինած եք։ Ինչպես դրած էի, ուղարկեցի Երևան երեք արկղ, որոնցից երկուսը գիրք են, իսկ երրորդը, որ ավելի փոքր է, Սանասարյանի անդրին է։ Խնդրեմ այդ արկղը զգուշությամբ բա-

նալ տաք և՝ <և> իրեն վայել տեղ հատկացնել։ Ներփակյալ ուղարկում եմ արկղների ուղարկման երկաթուղու ստացագիրը, պետք է ստանալ Երևանում և ճանապարհել էջմիածին։ Գրքերը ըստ բովանդակության կբաժանեք ճեմարանի և վանքի մատենադարաններին։ Կարծում եմ, որ երբ վանքի նոր մատենադարանը պատրաստվի, կաթուղիկոսի հրամանով կարելի է գրքերի մի մասը տեղափոխել ճեմարանից վանքի մատենադարանը։

Ձեր ուղարկած տպարանապետը հասած է տեղս։ Նորա պահանջները
23բ թեև չափազանց էին և անի||րագործելի, բայց մենք առաջնորդվելով Ձեր կոնդակով և խորհրդակցելով հմուտ անձինքների հետ, չորս նշանակած մեքենաներեն, հավանական է որ միայն երկուսը կուղարկեն, այն է Гидравлический пресс և*...., զի մյուս երկուսը միանգամայն ավելորդ են։ Թուղթը ողորկելու մեքենան անգործադրելի է. քանի որ այժմ գործարանները իրենք նույնը կանեն և պատրաստ ողորկյալ թուղթ կվաճառեն։ Այդ մասին դեռ խորհրդարանի վճիռը կայացած չէ, բայց հավանական է, որ այդպես լինի։

Մաղթում եմ Ձեզ փոխադարձ սեր և միաբանություն,
զի զուգությունն է մայր ամենայն բարյաց

[Կ. Եզյան]

[Հ. Գ.] Մայիսի «Արարատը» ստացա և զարմանքով, թեև ոչ առաջին անգամ, նկատեցի որ խմբագրությունը կարգ չգիտե, որ մեր սինոդը «սրբազան սինոդ» չէ, այլ՝ «Սինոդ Մ. Էջմիածնի», իսկ այդ
24ա համարի մեջ ևս Ս. տառը անգամ դրված է || «Սինոդ» խոսքի առջև. կոնդակներից քաղվածքների մեջ։ Փափագելի է, որ «Արարատի» լեզուն ավելի մշակված և ոճերը ավելի հայկական լինեն. և չլինեն այսպիսի ոճեր. «կոնդակ, որով յայտնեցաւ զմտադրութիւններն», կամ «որով յայտնեցաւ զկարգմանէ» և այլն**։ Եթե հայոց լեզվի գիտությունն այդպես անկյալ վիճակի մեջ լինի էջմիածնում, ո՞ւր պետք է նորան փնտրենք։

[Կ. Եզյան]

[հունիս 1903 թ.]***

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ****

1

1 Կարապետ Կոստանյան—հայագետ-բանասեր, Գևորգյան ճեմարանի տեսուչ։

2 Նկատի ունի Կ. Եզյանի նշանավոր աշխատությունը՝ «Сношения Петра Великого с армянским народом...», СПб, 1898.

* Մի բառ (ռուսերեն) անընթեռնելի. ամենայն հավանականությամբ՝ տպագրական սարքի անուն։

** Տե՛ս «Արարատ», 1903, էջ 388։

*** Քանի որ սա Մ. Մագիստրոսի № 8 նամակի պատասխանն է և այստեղ Եզյանը հայտնում է «Արարատ»-ի մայիսի համարի ստացման մասին, հարմար նկատեցինք թվագրել 1903 թ. հունիսով։

**** Նամակներում հիշատակված անձանց մասին բերում ենք միայն տվյալ ժամանակվա նրանց վարած պաշտոնի կամ զբաղմունքի վերաբերյալ մեր ունեցած տեղեկությունները։

3 «Արարատ», 1898, էջ 536—543։

4 Նկատի ունի Մկրտիչ Ա Խրիմյան կաթողիկոսին (1893—1907)։

5 Այդ պաշտոնին Մ. Տեր-Մովսիսյանը նշանակվել է 1898 թ. հոկտեմբերի 3-ին և մնացել մինչև 1899 թ. դեկտեմբերի 15-ը (ՀՍՍՀ ՊԿՊԱ, Կաթողիկոսական դիվան, թողոն 57, ցուցակ 3, գործ 96՝ Մեսրոպ եպիսկոպոս Տեր-Մովսիսյանի ծառայացուցակ, էջ 4ր, այսուհետև՝ «Ծառայացուցակ»)։

6 Ինչպես էջմիածնի, նույնպես և իր նկարագրած բոլոր հավաքածուների ցուցակների հրատարակման մաքից հրաժարվելով, Մ. Մագիստրոսը դրանք մուծել է «Ընդհանուր ցուցակ...»-ի մեջ և այդպիսով կենդանության օրոք նրա անունով որևէ ձեռագրացուցակ չի հրատարակվել։

2

1 Այդ ձեռագրերից երկուսը Մատթեոս Ուռհայեցու և Վարդան Արևելցու Պատմությունների ընդօրինակություններն են, որ 1814 թ. Տփխիսում Ն. Ռումյանցևի խնդրանքով և Եփրեմ Ա Զորադեղցի կաթողիկոսի հրամանով կատարել է Բարսեղ Վաղարշապատցին և որոնց մայր օրինակները նախորդ դարի վերջին էջմիածնի մատենադարանում արդեն չկային. տե՛ս Օ. Եգանյան, Մատենադարանի ձեռագրական հավաքածուները—Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի, հ. Ա, Երևան, 1965, էջ 22—23 (այսուհետև՝ «ՑՁՄՄ, Ա»)։ Մատենադարանի ավագ դիտական աշխատակից Ս. Լալաֆարյանի կազմած՝ Մոսկվայի Վ. Ի. Լենինի անվան ՍՍՀՄ պետական հանրային գրադարանի (նախկին Ռումյանցևյան թանգարան) հայերեն ձեռագրերի անտիպ ցուցակում նկարագրված 28 ձեռագրից երկուսը (№№ 17, 18) այս ձեռագրերն են։ Գրադարանում այժմ քարացած ձեռագիր չկա և Մ. Մագիստրոսի նկարագրությունը («Ընդհանուր ցուցակ...», ժողովածու, էջ 280, № ՇԱ) ստանում է եզակի արժեք։

2. Լազարյան ճեմարանում 151 ձեռագիր կար դեռևս 1888 թ. («Каталог книг и рукописей библиотеки Лазаревского института восточных языков», М., 1888)։ Այդ հավաքածուի մասին տե՛ս «ՑՁՄՄ, Ա», էջ 132—134։ Մագիստրոսի այս հաղորդումը ճշգրտում է, որ Լազարյան №№ 3716, 5034, 5947 և 5950 ձեռագրերն ավելացել են ոչ թե 1888 թ., այլ՝ 1901 թ. հետո։

3 Գր. Խալաթյանի ձեռագրերի մասին տե՛ս «ՑՁՄՄ, Ա», էջ 132—134 և՝ Օ. Եգանյան, Գրիգոր Խալաթյանի հայերեն ձեռագրերի հավաքածուն («Էջմիածին», 1970, Գ, էջ 47—48)։ Նամակի այս տեղեկությամբ իմանում ենք, որ 1904 թ. հեղինակի կազմած Գր. Խալաթյանի ձեռագրերի մի այլ ցուցակում (Մատենադարանի անտիպ ձեռագրացուցակների հավաքածու, № 98) նկարագրված 55 ձեռագրից վերջին 14-ն ավելացել են 1901—1904 թթ. ընթացքում։

4 Խ. Հովհաննիսյանի ձեռագրերից երեքը Լազարյան ճեմարանի ձեռագրերի կազմում մուտք են գործել Մատենադարան և ստացել 6604, 6961 և 7135 համարները («ՑՁՄՄ, Ա», էջ 132)։

5 Մի այլ տեղ Մ. Մագիստրոսը նշել է. «1901 թ. իմ կազմած ցուցակը ([Նոր Նախիջևանի—Ց. Վ.] Ս. Լուսավորիչ եկեղեցու) հասնում էր 261 համարի, մյուս եկեղեցիներինն էլ հետը՝ 320-ի։ 1921-ին բոլոր ձեռագրերը միացրել են և շարունակել իմ համարները՝ 262—326-ի հասցնելով» («Ընդհանուր ցուցակ...», Օժանդակ մաս, № 1)։ Նոր Նախիջևանի բոլոր եկեղեցիներին պատկանած 358 ձեռագիր 1922 թ. Եր. Շահազիզի միջոցով բերվել է Երևանի գրական թանգարան, որտեղից և 1938 թ. մուտք են արվել Մատենադարան («ՑՁՄՄ, Ա», էջ 160—161)։

3

1 Խոսքը հեղինակի «История перевода Библии на армянский язык», СПб, 1902, աշխատության մասին է, որը 1902 թ. դեկտեմբերի 15-ին որպես մագիստրոսական (թեկնածուական) դիսերտացիա պաշտպանվեց Ս. Պետերբուրգի համալսարանի արևելյան լեզուների ֆակուլտետում, հայ-վրացական բանասիրության ամբիոնի գծով, և որի համար Մեսրոպ վարդապետն ստացավ հայկական բանասիրության մագիստրոսի աստիճան։ Հետագայում նա հաճախակի ստորագրում էր Մեսրոպ Մագիստրոս ձևով և այսպիսով նրա գիտական կոչումը քաղաքացիություն ստացավ որպես հատուկ անուն։

2 Եղնիկ վարդապետ (Ղուկաս սարկավագ) Գյանջեցյան։

4

1 Հուսիկ Եպիսկոպոս Մովսիսյան—Բեսարաբիայի և Նոր Նախիջևանի հայոց թեմի նախկին առաջնորդ, այդժամ՝ սինոդի անդամ։

2 Ներսես արքեպիսկոպոս Խուդավերդյան—Բեսարաբիայի և Նոր Նախիջևանի թեմական առաջնորդ։

3 Այդ խնդրի էությունը պարզել չկարողացանք։

4 Խոսքը, հավանաբար, դպրոցների վերաբացման և եկեղեցական կալվածների վերադարձման մասին է, որի համար պայքարում էր Էջմիածինը և որը ավելի ուշ (օգոստոս, 1905 թ.) իրականացավ ինչ-որ չափով նաև Մ. Մագիստրոսի ջանքերով։

5 Սուքիաս արքեպիսկոպոս Պարոյան—Երևանի թեմի առաջնորդական փոխանորդ (Երևանի թեմի առաջնորդ համարվում է ամենայն հայոց կաթողիկոսը)։

6 Ակնարկում է Հ. Աճառյանի նկարագրումից (Հ. Աճառյան, Ցուցակ հայերեն ձեռագրաց Ասնասարյան վարժարանի ի Կարին, «Հանդէս ամսօրեայ», 1896, էջ 24—27, 241—246, 310—343, 371—374, 1897, էջ 24—26, 264—268, 294—295, 343—344, 359—362, առանձին տպագրությունը՝ Վիեննա, 1910) հետո ժողովված ձեռագրերը, որոնց նկարագրությունը պատրաստելու հանձնարարություն ինչ-որ մեկին տված է եղել Կ. Եղյանը։ Հետագայում այդ նոր ձեռագրերի ցուցակը ևս տպագրվեց Վիեննայում (Հ. Ք ո ս յ ա ն, Ցուցակ հայերեն ձեռագրաց Սանասարյան վարժարանի ի Կարին («Հանդէս ամսօրեայ», 1912, էջ 55—61, 1921, էջ 173—181, 486—493, 580—584)։

5

1 Նկատի ունի Ներսես արքեպիսկոպոս Խուդավերդյանին։

2 Նահապետ Նահապետյան և Վահան Տեր-Գրիգորյան—Էջմիածնի միաբաններ, Բեսարաբիայի թեմի կազմի մեջ մտնող Թեոդոսիայի (առաջինը) և Նոր Նախիջևանի (երկրորդը) Սուրբ Խաչ անունով վանքերի վանահայրեր։

6

1 Էջմիածնի մատենադարանի նոր շենքի կառուցմանը խոչընդոտում էր Մկրտիչ կաթողիկոս Խրիմյանը և այդ պատճառով Մ. Մագիստրոսի նախաձեռնությամբ, հոգացողությամբ ու հսկողությամբ այն իրագործվեց միայն 1908—1911 թթ. («Ընդհանուր ցուցակ...», Մատենագիտություն, էջ 1)։ Այս շենքում, որ իր ժամանակի համար բավական հարմարավետ գրադարանային շինություն էր, Մատենադարանը մնաց 1912 թ. մինչև Երևան տեղափոխվելը (1939 թ.)։

2 Ալ. Երիցյանի գրադարանի գնման մասին տե՛ս Մ ե ս ր ո պ վարդապետ Մայր Աթոռի մատենադարան («Արարատ», 1903, էջ 339—351)։

3 Տե՛ս № 3 նամակի 1-ին ծանոթագրությունը։

4 Կ. Եղյանի այդ ձեռագրի ինչ լինելը մեզ հայտնի չէ։

5 Գևորգ Մելիք-Կարագյոզյան—հայ գրական-հասարակական գործիչ, որը 1905—1906 թթ. Թիֆլիսում հրատարակեց «Արշալոյս» օրաթերթը։

6 Տե՛ս №№ 7 և 8 նամակները։

7

1 Նամակները գործում դասավորված են ժամանակագրական կարգով, իսկ այս մեկը անթվակիր լինելով՝ վերջում։ Ելնելով հիմնականում այս նամակում հաղորդվող փաստերից և դրանք համեմատելով մյուս նամակների հետ, գտանք, որ այն գրված պետք է լինի 1903 թ. ապրիլին։

2 Տե՛ս նախորդ նամակի 1-ին ծանոթագրությունը։

3 Էջմիածնի մայր տաճարի վերանորոգմանը Մ. Տեր-Մովսիսյանը մասնակցեց մեծագույն եռանդով և բանիմացությամբ. Մ ե ս ր ո պ վարդապետ. Ս. Էջմիածնի տաճարը («Արարատ», 1903, էջ 407—416) և Վ. Հ ա ր ո ւ թ յ ո ւ ն յ ա ն, Մայր տաճարի պահպանության ուղղությամբ կատարված ջանքեր («Էջմիածին», 1976, 2, էջ 38—44)։

4 Ստավրոպոլաբնակ Մարդար (Մակար) Պոպովի կտակով Ստավրոպոլի, Կաբինի Սանասարյան և այլ դպրոցների օգտին կաթողիկոսի տրամադրության տակ դրվում էր մի նշանակալից գումար («Արարատ», 1895, էջ 39 և 1896, էջ 95)։

5 Աշխատությունը «Արարատ»-ում չի տպագրվել, իսկ այլ աղբյուրից հեղինակի և նրա զբաղմունքի մասին տեղեկություն չստացանք։

6 Կարապետ վարդապետ Տեր-Մկրտչյան (1865—1914)—էջմիածնի լավագույն աստվածաբան-բանասեր գիտնականներից մեկը, այդ ժամանակ «Արարատ»-ի խմբագիր։ Աստվածաշնչի նրա ձեռնարկած գիտական հրատարակությունը չիրականացավ սկզբում էջմիածնի տպարանի հնարավորությունների սահմանափակության, հետագայում՝ Երևանի թեմի առաջնորդական փոխանորդի, Ատրպատականի հայոց թեմակալ առաջնորդի և այլ պաշտոններով զբաղված լինելու պատճառով։

8

1 Ն. Մառը մտադիր էր սկսել հայերեն և վրացերեն վիմագիր արձանագրությունների շարքի տպագրությունը և Թիֆլիսում հրավիրված այս ժողովի մասնակից հայ և վրացի բանասեր-պատմաբանները պետք է լինեին գործը կատարող հիմնական ուժը։

2 Հովսեփ Իզմիրյանի կտակով հատկացված գումարով Կ. Եղյանը Ռուսաստանի հայկական կրթամշակութային հաստատություններին ուղարկում էր հայերեն, ռուսերեն և եվրոպական լեզուներով գրքեր ու մամուլ։ Էջմիածին ուղարկված գրքերի և Մկրտիչ Սանասարյանի կիսանդրու մասին տե՛ս այս նամակի հետագա շարադրանքում, № 10 նամակի սկզբում և՝ «Արարատ», 1903, էջ 616—621։

3 Կ. Եղյանի նվիրած մատանիների մասին տե՛ս «Արարատ», 1903, էջ 617—618։

4 Թոռումյանի անձը պարզել չկարողացանք։

5 Օրիորդ Մանուշակի և նրա աշխատության մասին այլ տեղեկություն չունենալով հանդերձ, կարծում ենք, որ նա կարող էր լինել Շուշանիկ Բաղտանյանի քույրը, քանի որ № 3 նամակի վերջում Մեսրոպ վարդապետը ողջույններ է հղում Բաղտանյան օրիորդներին։ Հավանաբար, նրանք Կ. Եղյանի հանձնարարությամբ կազմում էին հայագիտական մատենագիտություններ։

6 Առաքել Դավրիժեցու հուշարձանի համար հանգանակությունը կաթողիկոսի թույլտվությամբ նախաձեռնել է Բարդեն վարդապետ (Ղուկաս սարկավագ) Աղավելյանը։ Հավաքված 219 ռ. գումարից 60 ռ. Տիրայր վ. Տեր-Հովհաննիսյանի միջոցով ուղարկել էր Կ. Եղյանը։ Այս փաստով է բացատրվում Կ. Եղյանի հետաքրքրվելը։ Հարցիս մասին տե՛ս «Արարատ», 1896, էջ 523, 575, 1897, էջ 85, 1899, էջ 292 և 1904, էջ 584։

7 Ներսես Աշտարակեցի կաթողիկոսի (1843—1851) կոնդակների ժողովածուն, որ կազմված է երեք ծավալուն հատորից, Սանասարյան ձեռագրերի Պետերբուրգի հավաքածուի 153 համարն էր, որ «Պատմագիրք հայոց» խորագրով մի արժեքավոր ձեռագրի հետ միասին Մ. Մագիստրոսի միջոցով Կ. Եղյանը հավաքածուի վառվելուց առաջ նվիրել էր էջմիածնի մատենադարանին։ Այժմ դրանք կրում են Մատենադարանի հայերեն ձեռագրերի հիմնական հավաքածուի 4584 («Պատմագիրք Հայոց»), 4585, 4586, 4587 համարները։ Անհրաժեշտ է կատարել ևս մի ճշգրտում. Մ. Մագիստրոսը նկարագրել է մինչև 624 (և ոչ թե 622) համարը՝ 1848 թ. ապրիլի 5-ին Ալեքսանդրապոլի և Լոռու հոգևորականներին ուղղված նամակը (տե՛ս ձեռ. № 4586, էջ 22տ), բայց մանրամասն նկարագրության փոխարեն «Ընդհանուր ցուցակ...»-ում դրված է ամենահամառոտ մի նկարագրություն. տե՛ս «Ընդհանուր ցուցակ...», Մատենագիրներ, թղթ. 3, էջ 1892, № 4986։ Ձեռագրերի մասին տե՛ս նաև Մ ե ս ր ո պ վարդապետ, Ներսես հինգերորդ կաթուղիկոսի կոնդակները («Արարատ», 1904, էջ 310—326, 404—411)։

8 «Արարատ», 1903, էջ 612—615։

9

1 Ք. Պատկանյանի գրադարանի գնման և էջմիածին տեղափոխելու մասին տե՛ս Մ ե ս ր ո պ վարդապետ, Մայր Աթոռի մատենադարան («Արարատ», 1903, էջ 339—351)։

2 Հուսիկ Զոհրապյան—Գևորգյան ճեմարանի ուսուցիչ և վանական կառավարության անդամ։

3 Մկրտիչ Ղազարյանի և նրա եվրոպական ուսումնառության մասին տե՛ս «Արարատ», 1902, էջ 1119 և 1903, էջ 715—716։

4 Կորյուն վարդապետ Սահակյան—Մկրտիչ Ա Խրիմյան կաթողիկոսի դիվանապետ և գավազանակիր։

10

1 Այդ ժամանակ ցարական պետական շրջաններում մտադրություն կար սահմանափակել ամենայն հայոց կաթողիկոսի իրավունքները և գործողությունների շրջանակները, որը ոչ հեռու ապագայում պետք է հանգեր էջմիածնի կաթողիկոսության վերացմանը։ Կոստանդնուպոլսի պատրիարք Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանյանի հիշյալ առաջարկությունը նպատակ ուներ ինչ-որ ձևով կանխել դա և հարկ եղած դեպքում ամենայն հայոց կաթողիկոսի իրավունքները տալ Կիլիկիայի կաթողիկոսին։ Այս հարցի և Սահակ Բ Խապայանի Կիլիկիայի հայոց կաթողիկոսական գահ բարձրանալուց (1902) հետո առաջացած վեճերի մասին մանրամասն տե՛ս Մ. Օրմանյան, Ազգապատում, մասն երրորդ, Երուսաղեմ, 1927, էջ 5307—5318, §§ 3077—3080։

11

1 Տե՛ս Հուսիկ եպիսկոպոս Մովսիսյան, Հայրապետական աթոռի մասին համառոտ տեսություն (Ս. էջմիածնի կառուցման 1600 ամյակի առիթով), («Արարատ», 1904, էջ 109—125)։

2 Եղիշե ծայրագույն վարդապետ Մուրադյան—խմբագիր նշանակվելուց առաջ Ատրպատականի հայոց թեմի առաջնորդ (այս պաշտոնում նրան վերարինեց Մեսրոպ վ. Մաքսուդյանը) («Արարատ», 1902, էջ 677—678, 1903, էջ 330—331, 1904, էջ 200 և 292)։

3 Մամբրե վարդապետ Մելիք-Ադամյան—մինչ այդ մնայուն ուսումնական հանձնաժողովի անդամ։

4 Խորեն վարդապետ Մուրադբեգյան—նոր Բայազետի գործակալ, հետագայում ամենայն Հայոց կաթողիկոս (1932—1938)։

5 Մ. Տեր-Մովսիսյանը Պետերբուրգ գնաց միայն տարվա վերջին՝ դեկտեմբերի 28-ին։ Որպես ռուսական իրականությանը և արքունիքին ծանոթ անձ, նա ներսես արքեպիսկոպոս Խուդավերդյանի հետ միասին բանակցություններ մեջ մտավ ցարական պետական շրջանների հետ։ Այդ բանակցությունների արդյունքը եղավ այն, որ 1905 թ. օգոստոսի 2-ի որոշմամբ վերարացվեցին հայկական ծխական դպրոցները և վերադարձվեցին եկեղեցական կալվածները (Մ. Օրմանյան, Ազգապատում, մասն երրորդ, էջ 5156—5180 (§§ 3026—3033 և «Ծանոյացուցակ», էջ 5բ)։

6 Տե՛ս նամակ № 5։